Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարեր

2020-2021 ուստարի

(Տևողությունը՝ 180 րոպե)

IX դասարան

Սիրելի՛ մասնակից: Առաջնորդվի՛ր «Զգացմունքը գրականության ուղեղն է» հրաշալի սկզբունքով և համարձակ շարադրի՛ր մտքերդ՝ բացահայտելով քո ինքնուրույն մտածողությունը:

Սիրով և հավատով՝ Աբազյան

1.Նկարագրի՛ր Շամիրամին՝ ըստ Պատմահոր գրի առած վիպերգի:

Գրի՛ր վիպերգի հիմնական գաղափարը: Արդիակա՞ն է այսօր այդ վիպերգը:

5մ.

2.Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի կերպարները: Ո՞ր կերպարն է քեզ հոգեհարազատ: Համեմատի՛ր Ալ. Շիրվանզադեի «Արտիստը» վիպակի հերոսի հետ:

5մ.

3.Վերլուծի՛ր եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը: Գրի՛ր Վիլյամ Սարոյանի և Մարտիրոս Սարյանի ասույթները բանաստեղծության մասին:

5մ.

4.Ո՞վ է «Ավելորդը» պատմվածքի հեղինակը: Ո՞ր ժամանակշրջանն է ներկայացված: Ո՞վ է ավելորդը պատմվածքում. ինչո՞ւ է ավելորդ: Անկեղծ զրույց ունեցիր նրա հետ. մխիթարի՛ր և կարեկցի՛ր:

5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան